Հավելված N 2
ՀՀ կառավարության 2023 թվականի
նոյեմբերի 30-ի N 2106-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՎԱՍՏԱԳՐՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են քաղաքաշինության բնագավառում մասնագետների (այսուհետ՝ մասնագետ) շարունակական մասնագիտական զարգացման (ՇՄԶ) կրեդիտների շնորհման, հավաստագրման հետ կապված հարաբերությունները:

2. Մասնագետների կրեդիտների շնորհումը և հավաստագրումն իրականացվում են Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմնի (այսուհետ՝ լիազոր մարմին) կողմից ստեղծված որակավորման հանձնաժողովի (այսուհետ՝ որակավորման հանձնաժողով) տված եզրակացությամբ:

3. Որակավորման հանձնաժողովի եզրակացությունները տրվում են որակավորման հանձնաժողովի կանոնադրությամբ նախատեսված կարգով:

4. Յուրաքանչյուր մասնագիտության գծով ՇՄԶ կրեդիտները շնորհվում են «Քաղաքաշինության մասին» օրենքի 10.1-ին հոդվածի 3-րդ մասի 31-րդ կետով սահմանված լիազոր մարմնի կողմից հաստատված չափորոշիչներին համապատասխան:

5. ՇՄԶ հավաստագիր (այսուհետ՝ հավաստագիր) տրամադրվում է՝

1) «Քաղաքաշինության մասին» օրենքի 21-րդ հոդվածով սահմանված քաղաքաշինության գործունեության տեսակին և ենթատեսակին համապատասխան հավաստագրման ենթակա մասնագիտությամբ (տես՝ սույն կարգի 6-րդ կետ) գործունեություն իրականացնելու հավակնություն ունեցող մասնագետին, որն ունի Հայաստանի Հանրապետությունում բակալավրի որակավորման աստիճան, մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի բարձրագույն կրթության որակավորման աստիճան կամ

օտարերկրյա պետությունում համապատասխան աստիճան, որի ճանաչումն ու համարժեքության հաստատումը Հայաստանի Հանրապետությունում իրականացվել են օրենքով սահմանված կարգով.

2) եթե մասնագետն ապահովել է «Քաղաքաշինության մասին» օրենքի 11.4-րդ հոդվածի 3-5-րդ կամ 11.1-ին հոդվածի 6-8-րդ մասերով սահմանված պահանջները.

3) 1-ին, 2-րդ և 3-րդ կարգի մասնագետներին՝ քաղաքաշինության բնագավառում մասնագիտական գործունեությունը շարունակելու համար.

4) 1-ին, 2-րդ և 3-րդ կարգի մասնագետներին, որոնք դատական կարգով չեն ճանաչվել անգործունակ կամ սահմանափակ գործունակ.

5) «Քաղաքաշինության մասին» օրենքի 11.9-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված մասնագետի հավաստագրի դադարեցման մեկ տարին լրանալուց հետո:

6. Քաղաքաշինության բնագավառում օրենքով սահմանված լիցենզավորման ենթակա գործունեության տեսակներին և ենթատեսակներին համապատասխան հավաստագրման ենթակա մասնագիտությունների դասակարգման աղյուսակ

ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ	Ներդիրների ծածկագրերը	**քաղաքաշինական փաստաթղթերի կազմում՝ բացառությամբ կոնստրուկտորական և ճարտարապետական մասերի**			**քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննություն**		**շինարարության իրականացում**			**շինարարության որակի տեխնիկական հսկողություն**		**քաղաքաշինական գործունեության օբյեկտների հետախուզման և հետազննման ծառայությունների մատուցում**	
		մասնագետների կարգերը և լիցենզիաների դասերը											
		1	2	3	1	2	1	2	3	1	2	1	2
		լիցենզիաների ծածկագրերը											
		01			02		03			04		05	
ՀԱՎԱՍՏԱԳՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	01	-			Ճարտարապետ փորձագետ		-			-		-	
	02	-			Ճարտարապետ-քաղաքաշինարար փորձագետ		-			-		-	
	03	-			Վերականգնող ճարտարապետ փորձագետ		-			-		-	
	04	-			Բնակելի, հասարակական և արտադրական կառույցների ճարտարագետ փորձագետ		Բնակելի, հասարակական և արտադրական կառույցների ճարտարագետ շինարար			Բնակելի, հասարակական և արտադրական կառույցների ճարտարագետ տեխնիկական հսկիչ		-	
	05	Էլեկտրաէներգետիկ ճարտարագետ նախագծող			Էլեկտրաէներգետիկ ճարտարագետ փորձագետ		Էլեկտրաէներգետիկ ճարտարագետ շինարար			Էլեկտրաէներգետիկ ճարտարագետ տեխնիկական հսկիչ		-	

	06	Ջերմագազամատակա-ռարման և օդափոխության ճարտարագետ նախագծող	Ջերմագազամատակա-ռարման և օդափոխության ճարտարագետ փորձագետ	Ջերմագազամատակա-ռարման և օդափոխության ճարտարագետ շինարար	Ջերմագազամատա-կարարման և օդափոխության ճարտարագետ տեխնիկական հսկիչ	-
	07	Հիդրոտեխնիկական կառույցների ճարտարագետ նախագծող	Հիդրոտեխնիկական կառույցների ճարտարագետ փորձագետ	Հիդրոտեխնիկական կառույցների ճարտարագետ շինարար	Հիդրոտեխնիկական կառույցների ճարտարագետ տեխնիկական հսկիչ	-
	08	Ջրամատակարարման և ջրահեռացման ճարտարագետ նախագծող	Ջրամատակարարման և ջրահեռացման ճարտարագետ փորձագետ	Ջրամատակարարման և ջրահեռացման ճարտարագետ շինարար	Ջրամատակարարման և ջրահեռացման ճարտարագետ տեխնիկական հսկիչ	-
	09	Տրանսպորտային ուղիների և կառույցների ճարտարագետ նախագծող	Տրանսպորտային ուղիների և կառույցների ճարտարագետ փորձագետ	Տրանսպորտային ուղիների և կառույցների ճարտարագետ շինարար	Տրանսպորտային ուղիների և կառույցների ճարտարագետ տեխնիկական հսկիչ	-
	10	Կապի համակարգերի ճարտարագետ նախագծող	Կապի համակարգերի ճարտարագետ փորձագետ	Կապի համակարգերի ճարտարագետ շինարար	Կապի համակարգերի ճարտարագետ տեխնիկական հսկիչ	-
	11	-	Ինժեներ-երկրաբան փորձագետ	-	-	Ինժեներ-երկրաբան հետախուզող
	12	-	-	-	-	Հետազննության և անձնագրավորման ճարտարագետ

7. Մասնագետը կրեդիտների գրանցման կամ հավաստագիր ստանալու համար N 4 հավելվածով սահմանված N 2-1-ից N 2-4 ձևերին համապատասխան (այսուհետ՝ հայտատու)՝ լրացված հայտերը և կից փաստաթղթերը լիազոր մարմին է ներկայացնում էլեկտրոնային եղանակով՝ քաղաքաշինության բնագավառի պետական ծառայություն-ների միասնական հարթակի միջոցով (էլ. հասցե՝ urban.e-gov.am):

8. Ներկայացված հայտը և կից փաստաթղթերի ամբողջականությունը լիազոր մարմինն ուսումնասիրում է դրանք ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

9. Ներկայացված հայտի և կից փաստաթղթերի ստուգման արդյունքում ոչ էական թերությունների (վրիպակների, ոչ իրավաբանական անճշտությունների, թվաբանական սխալների և նման այլ բացթողումների) հայտնաբերման դեպքում, էլեկտրոնային եղանակով՝ քաղաքաշինության բնագավառի պետական ծառայություն-ների միասնական հարթակի միջոցով (էլ. հասցե՝ urban.e-gov.am), ծանուցում է ուղարկվում հայտատուին 5-օրյա ժամկետում նշված անհամապատասխանությունները շտկելու համար: Ընդ որում, սույն կետով սահմանված ժամկետը չի հաշվարկվում սույն կարգի 8-րդ կետով սահմանված ժամկետի մեջ:

10. Սույն կարգի 9-րդ կետով սահմանված ժամկետում ներկայացված փաստա-թղթերը չհամալրելու դեպքում հայտը մերժվում է:

11. Որակավորման հերթական նիստում հայտը և կից փաստաթղթերն ընդգրկվելու օրվանից 15-օրյա ժամկետում որակավորման հանձնաժողովի կողմից իրականացվում է համապատասխանության գնահատում, որի արդյունքում տրվում է տվյալ մասնագիտության գծով հայտատուի հավաքած ՇՄԶ կրեդիտների և մասնա-գիտական գործունեության իրականացման փաստը հավաստող փաստաթղթերի վերաբերյալ դրական կամ բացասական եզրակացություն:

ՇՄԶ ԿՐԵԴԻՏՆԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ԵՎ ՀԱՎԱՍՏԱԳԻՐ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԴԻՄԵԼԸ

12. ՇՄԶ կրեդիտների գրանցման կամ հավաստագրման կազմակերպման և իրականացման գործընթացը բաղկացած է հետևյալ փուլերից՝

1) հայտի և կից փաստաթղթերի ներկայացում.

2) հայտի և կից փաստաթղթերի ամբողջականության ուսումնասիրում՝ համապատասխան ստորաբաժանման կողմից.

3) որակավորման հանձնաժողովի կողմից համապատասխանության գնահատում.

4) լիազոր մարմնի կողմից հայտի բավարարում կամ մերժում.

5) հավաստագրի տրամադրում և գրանցամատյանում գրանցում:

13. N 4 հավելվածով սահմանված դիմումների և հայտերի ձևերով նախատեսված՝ օրենքով սահմանված կարգով անձնական տվյալների մշակման, ինչպես նաև դիմումի մեջ և կից փաստաթղթերում առկա տեղեկությունների ստուգման համար հայտատուի համաձայնության դեպքում պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից սույն կարգով սահմանված հայտին կից պահանջվող փաստաթղթեր չեն ներկայացվում:

14. Լիազոր մարմինը կարող է ստուգել հայտատուի կողմից էլեկտրոնային եղանակով ներկայացված տվյալների իսկությունը՝ օգտագործելով պաշտոնական աղբյուրներից ստացված տվյալներ կամ դրա մասին ստանալով պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից գրավոր տեղեկատվություն: Լիազոր մարմնի կողմից նման հարցում ուղարկվելու դեպքում համապատասխան պետական և տեղական ինքնակառավարման մարմինները հարցումը ստանալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում են գրավոր տեղեկատվություն:

15. Լիազոր մարմինը Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեից հարցման միջոցով ստանում է հայտատուի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարված եկամտային հարկի, գործատուի համախառն եկամտի հանրագումարի չափերի, մասնագետների անհատական հաշվի

քաղվածքի և գրանցամատյաններում առկա այլ տվյալների մասին տեղեկատվություններ: Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեն տեղեկատվությունը տրամադրում է հարցումը ստանալուն հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում:

16. Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից անհրաժեշտ տեղեկատվությունները կարող են փոխանցվել առցանց եղանակով (առկայության դեպքում):

17. Տեսական գիտելիքների և գործնական հմտությունների զարգացում գրանցած անձինք քաղաքաշինության բնագավառում մասնագիտական գործունեություն կարող են իրականացնել բարձրագույն մասնագիտական կրթություն իրականացնող ուսումնական հաստատությունների կողմից «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» օրենքով նախատեսված ավարտական փաստաթղթի հիման վրա՝ սույն կարգին համապատասխան մասնագիտական գործունեության իրավունքը մասնագետների գրանցամատյանում գրանցելու և մասնագիտական գործունեություն իրականացնելու հավաստագիր ստանալու դեպքում:

18. Հայտատուն հաջորդ հնգամյա փուլի համար «Քաղաքաշինության մասին» օրենքի 11.3-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված ՇՄՋ կրեդիտների նվազագույն քանակը լրացնելու կամ «Քաղաքաշինության մասին» օրենքի 11.1-ին հոդվածի 6-րդ և 7-րդ մասերով սահմանված պահանջներն ապահովելու դեպքերում հավաստագիր ստանալու և այդ իրավունքը մասնագետների գրանցամատյանում գրանցելու համար լիազոր մարմին է ներկայացնում հայտ՝ համաձայն N 2-1 ձևի:

19. Քաղաքաշինության բնագավառի մասնագետները ՇՄՋ կրեդիտների շնորհման և մասնագետների գրանցամատյանում գրանցվելու համար լիազոր մարմին հայտ են ներկայացնում՝ համաձայն N 2-2, N 2-3, N 2-4 ձևերի:

20. Սույն կարգի 11-րդ կետի համաձայն՝ իրականացվում է հայտի և փաստաթղթերի համապատասխանության գնահատում և տրամադրվում է մասնագիտական դրական կամ բացասական եզրակացություն:

21. Մասնագիտական դրական կամ բացասական եզրակացության հիման վրա լիազոր մարմնի ղեկավարի հրամանով 5-օրյա ժամկետում տրամադրվում է հավաստագիր կամ հավաստագրի տրամադրումը մերժվում է: Սույն կարգով նախատեսված դեպքերում լիցենզավորող մարմինն իր որոշումներն ընդունում է համապատասխան որակավորման հանձնաժողովի եզրակացության հիման վրա: Սակայն լիցենզավորող մարմինն իրավունք ունի որոշման համար հիմք չընդունել որակավորման հանձնաժողովի եզրակացությունը: Այս դեպքում նա պարտավոր է իր որոշմամբ հիմնավորել հանձնաժողովի եզրակացությունը չընդունելու պատճառները:

22. Հավաստագրի տրամադրումը մերժվում է հետևյալ հիմքերով՝

1) ներկայացված փաստաթղթերը կեղծ են կամ խեղաթյուրված.

2) քաղաքաշինության բնագավառի համապատասխան բարձրագույն մասնագիտական կրթության ավարտական փաստաթղթերով ներկայացված մասնագիտությունը չի համապատասխանում հայտում նշված հավաստագրման ենթակա մասնագիտությանը («Քաղաքաշինության մասին» օրենքի 11.1-ին հոդվածի 6-րդ և 7-րդ մասերով սահմանված պահանջների անհամապատասխանության դեպքում).

3) ներկայացված փաստաթղթերի համաձայն չի լրացվել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ պահանջվող կրեդիտների նվազագույն քանակը.

4) հայտատուն վերջին 5 տարում առնվազն 3 տարի մասնագիտական գործունեություն չի իրականացրել և այն լրացնելու նպատակով չի անցել թեստավորում.

5) տեսական գիտելիքների և գործնական հմտությունների զարգացման համար ՇՄԶ կրեդիտները տրամադրվել են այն կազմակերպությունների կողմից, որոնք նախատեսված չեն «Քաղաքաշինության մասին» օրենքի 11.3-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված կազմակերպությունների ցանկում.

6) ներկայացված ՇՄԶ կրեդիտները չեն լրացվել ՇՄԶ-ի գործունեության բոլոր տեսակներից (տեսական գիտելիքների զարգացում, գործնական հմտությունների զարգացում), և անձը չի անցել թեստավորում:

23. Հավաստագրի տրամադրման կամ մերժման վերաբերյալ լիազոր մարմնի ղեկավարի հրամանը հաստատվելուց հետո հավաստագիրը եռօրյա ժամկետում էլեկտրոնային համակարգի միջոցով հանձնվում է հայտատուին:

24. Հայտը բավարարվելու դեպքում հայտատուին 5 տարի ժամկետով տրամադրվում է շարունակական մասնագիտական զարգացման հավաստագիր (Ձև N 2-5)՝ սույն հավելվածով սահմանված կարգով:

2. ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԻ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՀԱՎԱՍՏԱԳՐՄԱՆ ԿԱՋՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

25. Հավաստագիրը մասնագետի ինքնուրույն մասնագիտական գործունեությունը շարունակելու թույլտվություն է, որը տրվում է «Քաղաքաշինության մասին» օրենքով նախատեսված դեպքերում:

26. Հավաստագրի ժամկետի ավարտից առնվազն երեք ամիս առաջ, սույն հավելվածով սահմանված կարգով, մասնագետը դիմում է հաջորդ հինգ տարիների համար հավաստագիր ստանալու նպատակով:

27. Եթե հաջորդ հինգ տարիների համար հավաստագիր ստանալու նպատակով դիմում է ներկայացվել նախորդ հավաստագրի գործողության ավարտից հետո, ապա հավաստագրերի գործողության ժամկետների միջև ընկած ժամանակահատվածում մասնագիտական գործունեություն իրականացնելու իրավունքից զրկվելու ռիսկը կրում է մասնագետը:

28. Մասնագիտական դրական կամ բացասական եզրակացության հիման վրա լիազոր մարմնի ղեկավարի հրամանով տրամադրվում է հավաստագիր կամ հավաստագրի տրամադրումը մերժվում է:

29. Հավաստագրի տրամադրման մերժման վերաբերյալ լիազոր մարմնի ղեկավարի հրամանը եռօրյա ժամկետում հանձնվում է հայտատուին՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով սահմանված կարգով:

3. ԿՐԵԴԻՏՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ ԵՎ ՀԱՎԱՍՏԱԳՐԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ

30. Սույն հավելվածի 24-րդ կետով սահմանված հայտի բավարարման դեպքում՝ լիազոր մարմնի հրամանի ընդունումից հետո եռօրյա ժամկետում հայտատուին հանձնվում է մասնագիտական գործունեության հավաստագրի Հայաստանի Հանրապետության պաշտոնական փաստաթղթերի վավերականության ստուգման հսկիչ համարը, և էլեկտրոնային գրանցամատյաններում, նույն ժամկետում, կատարվում են համապատասխան գրանցումներ:

31. Հավաստագիր ստացած մասնագետի անվան, ազգանվան կամ գործատուի փոփոխման դեպքում տվյալ անձը պարտավոր է այդ փոփոխության կատարման օրվանից 15-օրյա ժամկետում հայտնել լիազոր մարմնին՝ հավաստագրում և համապատասխան գրանցամատյանում փոփոխություն կատարելու կամ նոր հավաստագիր ստանալու համար: Սույն կետում նախատեսված դեպքում համապատասխան փոփոխությունները կատարվում են դիմումը ստանալուց հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

32. Մասնագիտական գործունեություն իրականացնելու հավաստագրի տրամադրումը կամ հավաստագրի մերժումը կարող է բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով սահմանված կարգով կամ դատական կարգով:

33. Հավաստագրերը համարակալվում են ըստ սերիայի և հերթական համարի՝ վեցանիշ թվերով:

34. Հավաստագրերը տրվում են էլեկտրոնային եղանակով՝ հայերեն լեզվով: Պահանջի առկայության դեպքում կարող են տրամադրվել նաև հավաստագրի թղթային տարբերակները:

35. Փաստաթղթի վավերականության ստուգումն ու էլեկտրոնային բնօրինակի ներբեռնումը հնարավոր է իրականացնել Հայաստանի Հանրապետության պաշտոնական փաստաթղթերի վավերականության ստուգման միասնական համակարգի կայքում

մուտքագրելով հսկիչ համարը կամ սքանավորելով արագ արձագանքման ծածկագիրը (QR Code):

36. Հավաստագրերի հսկիչ համարը կորցնելու դեպքում այն տրամադրվում է դիմումն ստանալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում՝ անվճար:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

05.12.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ